

041.0370.200600

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

20 հունիսի 2000 թվականի N 370

ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի փետրվարի 12-ի
"Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին" N 64 որոշմանը համապատասխան՝

1. Հաստատել՝

ա) որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կանոնադրությունը եւ
անհատական կազմը (կցվում են)։

բ) (1-ին կետի բ ենթակետն ուժը կորցրել է 23.09.06 թիվ 704-Ն որոշում)

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 1997 թվականի մարտի
6-ի "Որդեգրման գործերով հանձնաժողովի մասին" N 67 եւ 1998 թվականի դեկտեմբերի 16-ի
"Հայաստանի Հանրապետության վարչապետի 1997 թվականի մարտի 6-ի N 67 որոշման մեջ
փոփոխություններ կատարելու եւ որդեգրման գործերով հանձնաժողովի կազմը հաստատելու
մասին" N 731 որոշումները։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի սեպտեմբերի 1-ից։

(վերնագիրը փոփ. 23.09.06 թիվ 704-Ն որոշում)

Հաստատված է
ՀՀ վարչապետի 2000 թ.
հունիսի 20-ի N 370 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետեւ՝ հանձնաժողով) քննարկում է օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց եւ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետեւ՝ օտարերկրյա քաղաքացի) կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա (այսուհետեւ՝ երեխա) որդեգրելու հետ կապված հարցերը։

(1-ին կետը փոփ. 24.09.07 թիվ 673-Ա որոշում)

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաեւ սույն կանոնադրությամբ եւ իր կողմից հաստատված աշխատակարգով։

3. Հանձնաժողովն իր գործունեությամբ հաշվետու է պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարությանը եւ Հայաստանի Հանրապետության վարչապետին։

4. Հանձնաժողովի կանոնադրությունը եւ անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
5. Հանձնաժողովն ունի իր անվամբ կլոր կնիք, ձեւաթուղթ եւ դրոշմակնիք:
6. Հանձնաժողովում որդեգրման հետ կապված տեղեկությունները գաղտնի են:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Հանձնաժողովի խնդիրներն են՝

- ա) օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխա որդեգրելու հետ կապված հարցերի քննարկումը.
- բ) օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխայի որդեգրման հնարավորության մասին եզրակացություն տալը.
- գ) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների հաշվառումը.
- դ) սույն կանոնադրությունից բխող եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

8. Հանձնաժողովն իր առջեւ դրված խնդիրներն իրականացնելիս պարտավոր է՝

- ա) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում, իրավասու մարմիններին կատարած հարցման միջոցով, անցկացնել այդ անձի ու նրա կենսապայմանների ուսումնասիրություն եւ կազմել համապատասխան ակտ.
 - բ) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց ստացված փաստաթղթերի եւ կազմված ակտի հիման վրա սահմանված կարգով տալ որդեգրման հնարավորության մասին գրավոր եզրակացություն եւ դրական եզրակացության դեպքում նրան վերցնել հաշվառման՝ որպես որդեգրողի թեկնածու.
 - գ) որդեգրման հնարավորության մասին բացասական եզրակացություն կայացնելու դեպքում, դրանից հետո մեկշաբաթյա ժամկետում, դրա մասին գրավոր տեղեկացնել դիմողին.
 - դ) (8-րդ կետի դ ենթակետն ուժը կորցրել է 24.09.07 թիվ 673-Ա որոշում)
 - ե) որդեգրողի թեկնածու օտարերկրյա քաղաքացու պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ որդեգրման ենթակա երեխայի եւ նրա մերձավոր ազգականների մասին.
 - զ) կազմակերպել որդեգրման ենթակա երեխայի եւ որդեգրողի թեկնածու օտարերկրյա քաղաքացու հանդիպումը.
 - է) սահմանված կարգով իր կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային ընտրելու դեպքում 3-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը.
 - ը) կատարել սույն կանոնադրությունից բխող եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ: (8-րդ կետը փոփ. 24.09.07 թիվ 673-Ա որոշում)
9. Հանձնաժողովն իր առջեւ դրված խնդիրներն իրականացնելիս իրավունք ունի՝
- ա) Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից պարբերաբար ստանալու տեղեկատվություն որդեգրման ենթակա երեխաների մասին.
 - բ) 10-օրյա ժամկետում, ըստ անհրաժեշտության, որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց պահանջելու նրա մերձավոր ազգականների համաձայնությունը, ինչպես նաեւ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության, հայ համայնքի, հայկական եկեղեցու, վստահություն վայելող անձանց (կազմակերպությունների) երաշխավորագրերը.
 - գ) (9-րդ կետի գ ենթակետն ուժը կորցրել է 24.09.07 թիվ 673-Ա որոշում)

դ) իրականացնելու սույն կանոնադրությունից բխող եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

(9-րդ կետը փոփ. 24.09.07 թիվ 673-Ա որոշում)

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից եւ անդամներից:

11. Հանձնաժողովի կազմի մեջ, ի պաշտոնէ, մտնում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը (հանձնաժողովի նախագահ), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը, Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը (հանձնաժողովի քարտուղար):

(11-րդ կետը փոփ. 08.10.03 թիվ 484-Ն, 24.09.07 թիվ 673-Ա որոշումներ)

12. Հանձնաժողովի նախագահը, քարտուղարը եւ անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական կարգով:

13. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի եւ սույն կանոնադրությամբ նախատեսված գործողությունների միջոցով:

14. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամսական մեկ անգամ:

15. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

16. Հանձնաժողովի նիստերը, նախագահի հանձնարարությամբ, կարող է վարել հանձնաժողովի անդամներից մեկը:

17. Հանձնաժողովի անդամները նիստերի հրավիրման օրվա, տեղի, ժամանակի եւ օրակարգի մասին իրազեկվում են նիստի հրավիրման օրվանից առնվազն հինգ օր առաջ:

18. Հանձնաժողովի նախագահի հրավերով հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

19. Հանձնաժողովի որոշումները եւ որդեգրման հնարավորության մասին եզրակացությունները (այսուհետեւ՝ որոշում) ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

20. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

բ) հրավիրում է հանձնաժողովի նիստեր եւ վարում դրանք.

գ) ստորագրում է հանձնաժողովի որոշումները եւ արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

դ) վերահսկողություն է իրականացնում հանձնաժողովի ընդունված որոշումների կատարման նկատմամբ.

ե) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների եւ անձանց հետ հարաբերություններում.

զ) հանձնաժողովի անդամների միջեւ կատարում է աշխատանքի բաշխում.

ե) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

21. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը եւ դրանք տրամադրում հանձնաժողովի նախագահին ու անդամներին.

բ) վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

գ) ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.

դ) կատարում է հանձնաժողովի եւ նրա նախագահի հանձնարարականները:

22. Հանձնաժողովի անդամները՝

ա) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.

բ) հարցեր են ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.

գ) առաջարկություններ են ներկայացնում հանձնաժողովի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

դ) ծանոթանում են հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

ե) կատարում են հանձնաժողովի եւ նրա նախագահի հանձնարարականները:

23. Հանձնաժողովի գործունեության տեղեկատվական-վերլուծական, կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:

24. Հանձնաժողովի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին:

25. Հանձնաժողովի լուծարումից հետո նրա գործունեության հետ կապված նյութերը, փաստաթղթերը ենթակա են պահպանման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաստատված է

ՀՀ վարչապետի 2000 թ.

հունիսի 20-ի N 370 որոշմամբ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՆԸՍՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Դանիելյան- ՀՀ արդարադատության նախարար (հանձնաժողովի նախագահ)

Հ. Քուշկյան - ՀՀ առողջապահության նախարար

Ա. Վարդանյան - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար

Լ. Մկրտչյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարար

Ա. Կիրակոսյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Ա. Նազարյան - ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Հ. Հարությունյա - ՀՀ ոստիկանության պետ

Ա. Կարապետյան - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

(կազմը փոփ. 27.07.01 թիվ 561, 04.10.01 թիվ 708, 08.10.03 թիվ 484-Ն, 24.09.07 թիվ 673-Ա որոշումներ)

familiarize Հաստատված է
ՀՀ վարչապետի 2000 թ.
հունիսի 20-ի N 370 որոշմամբ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
որդեգրման հարցերով մարզային հանձնաժողովների
(կանոնադրությունն ուժը կորցրել է 23.09.06 թիվ 704-Ն որոշում)